

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

1977 թ. Պատմության ինստիտուտի համակարգում ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի նախաձեռնությամբ ստեղծվեց Հայ-ռուսական պատմական կապերի ուսումնասիրման բաժինը: Սկզբնական շրջանում բաժնի աշխատանքները կատարվում էին հիմնականում հայ-ռուսական հարաբերությունների պատմության հիմնախնդիրների ուսումնասիրության ուղղությամբ: 1978 թ. հրատարակվում է բաժնի գիտաշխատող Ա.Գ. Աբրահամյանի «Իսրայել Օրի» աշխատությունը, որում հեղինակը տարբեր աղբյուրների հիման վրա ներկայացնում է Իսրայել Օրու դիվանագիտական գործունեությունը: 1980 թ. լույս է տեսնում բաժնի աշխատակից Ս. Տեր-Ավակիմովայի «Հայ-ռուսական հարաբերությունները Պետրոս I-ի պարսկական արշավանքի նախապատրաստման ժամանակաշրջանում» մենագրությունը, որը տարբեր սկզբնաղբյուրների հիման վրա գրված ուշագրավ ուսումնասիրություն է:

Թեև գաղափարախոսական և քաղաքական իրավիճակից ելնելով բաժինը պաշտոնապես չէր զբաղվում Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության հարցերով, բայց այդ ուղղություններով ևս կատարվում էին զգալի աշխատանքներ: Մ. Ներսիսյանի խմբագրությամբ լույս է տեսել «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն (Ե., 1966, Ե., 1982՝ ռուսերեն, իսկ 1991-ին՝ հայերեն), որը խորհրդահայ պատմագրության մեջ հայերի ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերի առաջին գիտական հրատարակությունն է: Նրանում համոզիչ փաստերով ցույց տրվեց թուրքական կառավարող շրջանների կողմից հայկական կոտորածները կազմակերպելու կանխամտածված քաղաքականությունը և հրեշավոր կերպով այդ քաղաքականության կենսագործումը:

Բաժնի գիտաշխատողների կողմից հրատարակված Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության տարբեր հիմնահարցերին նվիրված մի շարք գիտական ուսումնասիրություններից կարելի է առանձնացնել «Հայ ժողովրդի նոր պատմության էջերից» (Ե., 1982) հոդվածների ժողովածուն, որում ամփոփված են 1862 թ. Զեյթունի ապստամբության պատմությանը, հայերի կոտորածներին նվիրված նյութեր:

1986 թ. հրատարակվում են բաժնի գլխավոր գիտաշխատող Հրաչիկ Միմնյանի «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը», իսկ 1991 թ.՝ «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» արժեքավոր մենագրությունները: 1988 թ. ռուսերենով հրատարակվում է բաժնի առաջատար գիտաշխատող Բ. Բալայանի «Дипломатическая история русско-иранских войн и присоединения Восточной Армении и России» աշխատությունը, որում հեղինակը տարաբնույթ փաստաթղթերի ու սկզբնաղբյուրների հիման վրա ներկայացնում է Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման գործընթացի դիվանագիտական պատմությունը:

1990 թ. հրատարակվում է Մ. Ներսիսյանի, Ա. Ալեքսանյանի, Վ. Մարտիրոսյանի և Պ. Չոբանյանի կոլեկտիվ աշխատությունը՝ «Հայ-ռուսական հարաբերությունները 18-րդ դարում (1760–1800)» փաստաթղթերի ժողովածուի 4-րդ հատորը, որի համար բաժնի հիշյալ աշխատակիցները ներկայացվում են առաջին կարգի մրցանակի: Գիտահետազոտական թեմաները բարձր մակարդակով կատարելու համար պարգևատրվել են նաև բաժնի ավագ գիտաշխատող Ժ. Անանյանը, աշխատակիցներ Ա. Գրիգորյանը և Մ. Կարապետյանը:

1991 թ. պրոֆեսոր Ս. Ստեփանյանի խմբագրությամբ և առաջաբանով հրատարակվում է «Германские источники о геноциде армян» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն: Մինչ այդ, 1975 թ. Ս. Ստեփանյանը ռուսերենով հրատարակել էր «Армения в политике империалистической Германии (конец XIX – начало XX вв.)» արժեքավոր աշխատությունը:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո Պատմության ինստիտուտում տեղի ունեցան կառուցվածքային փոփոխություններ, ստեղծվեցին գիտահետազոտական աշխատանքների նոր թեմատիկ խմբեր: Մասնավորապես, 1992 թ. բաժնում ստեղծվեց «Հայկական հարցը, Հայոց ցեղասպանությունը և մեծ տերությունները 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին» թեմատիկ խումբը, որի ղեկավար նշանակվեց պ.գ.դ., պրոֆեսոր Ս. Ստեփանյանը: Հետագայում տվյալ թեմատիկ խմբի հիման վրա էլ պաշտոնապես ստեղծվեց Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժինը, որը 1999–2010 թթ. ղեկավարեց Ս. Ստեփանյանը:

Հրատարակվեցին և գիտական շրջանառության մեջ դրվեցին Հայոց ցեղասպանությունը փաստող գերմանական, ռուսական, ֆրանսիական, ամերիկյան նորահայտ փաստաթղթերը: 1995 թ.՝ Հայոց ցեղասպանության 80-ամյակի կապակցությամբ, ակադեմիկոս Մ. Ներսիսյանի խմբագրությամբ լույս տեսավ «Հայոց 1915–1916 թթ. ցեղասպանության մատենագիտությունը», որտեղ ըստ տարեթվերի դասակարգված և ներկայացված է ցեղասպանության վերաբերյալ 1915–1990 թթ. հայերեն և օտար լեզուներով հրատարակված հսկայական գրականությունը: Այս առումով նշելի է նաև 1995 ռուսերենով լույս տեսած ակադեմիկոս Վ. Միքայելյանի «Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը Թուրքիայում. 1913–1919» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, որը զգալի ավանդ է ցեղասպանության պատմության ուսումնասիրության բնագավառում: Հեղինակը գերմանական արխիվներից գիտական շրջանառության մեջ է դրել նորահայտ փաստաթղթեր և վավերագրեր, դրանց հիման վրա փաստորեն պատկերելով ցեղասպանության նախապատրաստումը և իրականացումը, ընթացքը մինչև 1919 թ.: 2004 թ. ժողովածուն հրատարակվում է նաև գերմաներեն:

1996–1998 թթ. հրատարակվում են Ս. Ստեփանյանի «Արմին Վեգները և Էրնստ Վերները հայոց ցեղասպանության մասին», «Յոհաննես Լեփսիուսը և Հայաստանը», բաժնի առաջատար գիտաշխատող, պ.գ.դ. Ն. Սարուխանյանի «Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ», «Լեոն և Հայկական հարցը», «Ալեքսեյ Ջիվլեգովը որպես պատմաբան և Հայկական հարցը» արժեքավոր աշխատությունները:

1998 թ. հրատարակվում է «Պատմության կեղծարարները» հոդվածների ուշագրավ ժողովածուն, որում զետեղված են Մ. Ներսիսյանի վերջին տաս տարիների լավագույն հոդվածները՝ նվիրված հայկական հարցի, հայոց ցեղասպանության, ազգային-ազատագրական շարժումների, հայ-ռուսական հարաբերությունների թեմաներով պատմության կեղծարարների աշխատությունների քննադատությանը: 2002 թ. հրատարակվում են Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850–1890 թթ.», իսկ 2005 թ.՝ «Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր» աշխատությունները:

1999 թ. լույս է տեսնում ակադեմիկոս Գ. Գալոյանի «Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ.», իսկ 2004 թ.՝ «Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում XVI դարից մինչև 1917 թ.» արժեքավոր ուսումնասիրությունները՝ նվիրված Հայկական հարցի քննական վերլուծությանը: Հեղինակը պատմական նորահայտ սկզբնաղբյուրների՝ հիմնականում Արևմտյան Եվրոպայի երկրների արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությամբ շարադրել է Հայկական հարցի պատմությունը նշված ծավալուն ժամանակաշրջանում:

2001 թ. բաժնի գիտաշխատողներն ակտիվորեն մասնակցում են ապրիլի 23-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում Պատմության, Արևելագիտության ինստիտուտների և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից կազմակերպված Հայոց ցեղասպանության 86-րդ տարելիցին նվիրված միջազգային գիտաժողովին:

2002 թ. լույս է տեսնում ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Լ. Հովհաննիսյանի «Հայկական հարցը և Մեծ տերությունները 1914–1917 թթ.» ուշագրավ մենագրությունը, որում նորահայտ արխիվային օտարալեզու վավերագրերի հիման վրա լուսաբանվում և ներկայացվում են նշված տարիներին մեծ տերությունների երկդիմի քաղաքականությունը հայկական հարցում:

2003 թ. բաժնի գլխավոր գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Միմոնյանի կողմից հրատարակվում է «Ազատագրական պայքարի ուղիներում» մենագրության նախատեսված 4 գրքերից 1-ին և 2-րդը, որոնք ընդգրկում են 1904–1907 թթ. հայ ազատագրական հերոսական պայքարի պատմությունը: Աշխատության մեջ պատմագիտական հարուստ գրականության, բազմալեզու արխիվային նյութերի լայն հենքի վրա բազմակողմանիորեն քննության են առնվում Առաջին աշխարհամարտին նախորդած տարիներում Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները:

2004 թ. լույս է տեսնում բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Ա. Խոսրոնայի «Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ)» աշխատությունը: Մենագրությունում քննության է առնված ինչպես 1895–1896 թթ., այնպես էլ 1914–1918 թթ. թուրքական իշխանությունների կողմից ասորիների նկատմամբ իրականացված զանգվածային կոտորածների հետևողական քաղաքականությունը, որը մաս է կազմել ինչպես հայերի, այնպես էլ թուրքահպատակ մյուս քրիստոնյաների ցեղասպանության ընդհանուր համաթուրքական ծրագրին: Աշխատության փաստական հարուստ նյութն ու հեղինակի եզրահանգումները դառնում են ամուր կռվան Օսմանյան տերությունում քրիստոնյաների զանգվածային ոչնչացումները քողարկող և ժխտող թուրքական պաշտոնական քարոզչության դեմ: 2005 թ. աշխատությունը հրատարակվում է ռուսերեն:

2005 թ. լույս է տեսնում բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.դ. Վ. Պողոսյանի «Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ (XIX դ. վերջ – XXդ. սկիզբ) արժեքավոր մենագրությունը: Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ առաջին անգամ հեղինակը ձեռնարկել է ֆրանսիական պատմագրության նվաճումների և ելևէջների համակողմանի ուսումնասիրությունը՝ ցեղասպանության առաջին փուլի՝ համիդյան կոտորածների պատմության գնահատման ասպարեզում: Մենագրությունում քննական վերլուծության են ենթարկվել քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող ֆրանսիացի պատմաբանների, ինչպես նաև քաղաքական ու կրոնական գործիչների ուսումնասիրությունները: Ֆրանսերենից Վ. Պողոսյանի հայերեն թարգմանությամբ նույն թվականին լույս է տեսնում ֆրանսահայ պատմաբան Արթուր Պեյլերյանի աշխատասիրությամբ դեռևս 1983 թ. Փարիզում լույս ընծայված «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում 1914–1918 թթ.» փաստաթղթերի երկհատոր ժողովածուն: Հատորները ամփոփում են ֆրանսիական զանազան արխիվներից (մասնավորապես, Արտաքին գործերի նախարարության արխիվից) քաղված և առաջին անգամ շրջանառության մեջ դրված անտիպ փաստաթղթեր, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանությանը և հայկական հարցին 1914–1918 թթ.:

2005 թ. Ս. Ստեփանյանի առաջաբանով գերմաներենից թարգմանությամբ հրատարակվում է Վոլֆանգ և Զիգրիդ Գուստերի կողմից կազմված «Հայոց ցեղասպանություն. պաշտոնական փաստաթղթեր գերմանական արխիվներից» ժողովածուն: Առաջին անգամ հրապարակվող բազմաթիվ

փաստաթղթերն անհերքելի ապացուցում են թուրքական իշխանությունների պատասխանատվությունը հայերի ցեղասպանությունը պետականորեն կազմակերպելու և իրականացնելու գործում: Ս. Ստեփանյանի կողմից հաջորդաբար հրատարակվում են՝ «Первый геноцид XX века: проблемы международного признания, преодоления последствий геноцида армян и исторические уроки» (Ե., 2005) աշխատությունը և «Судебный процесс Талаата паши» (Ե., 2007) փաստաթղթերի արժեքավոր ժողովածուն: Նույն թվականին բաժնի գիտաշխատող, պ.գ.թ. Բ. Պողոսյանը հրատարակում է «Հայանպաստ շարժումը Մեծ Բրիտանիայում 1914–1923 թթ.», իսկ 2011 թ.՝ «Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991–2007 թթ.» ուշագրավ աշխատությունները:

2005 թ. բաժնի գիտաշխատողները գեկուցումներով հանդես են գալիս ՀՀ ԳԱԱ նախագահության և Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճներում ապրիլի 19–22-ը անցկացված Հայոց ցեղասպանության 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին:

2006 թ. լույս է տեսնում բաժնի գիտաշխատող, պ.գ.թ. Ա. Անանյանի «Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում» աշխատությունը: Նրանում հեղինակն անդրադառնում է հայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցի ազդեցությանը ՀՀ արտաքին քաղաքականության ու մասնավորապես հայ-թուրքական միջպետական ու հասարակական հարաբերություններին:

2007 թ. բաժինը քննարկում և հրատարակության է երաշխավորում Ջոն Կիրակոսյանի «Ա. Ջիվլեզովը և նրա պատմահրապարակոսական ժառանգությունը» արժեքավոր աշխատությունը: Նրանում ներկայացվում են մեծանուն գիտնականի ինչպես պատմագիտական, այնպես էլ հրապարակախոսական ուսումնասիրությունները, որոնք լույս են սփռում հայկական հարցի, հայերի ցեղասպանության, հայ գաղթականության պատմության, հայ-ռուսական ու հայ-թուրքական հարաբերությունների և այլ հիմնախնդիրներին:

2008 թ. լույս է տեսնում բաժնի առաջատար գիտաշխատող Ն. Սարուխանյանի «Ալեքսեյ Ջիվլեզովը որպես պատմաբան և Հայկական հարցը» աշխատությունը: Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս գրքույկում ուսումնասիրության նյութ է դարձել հայագի մեծ գիտնական Ա. Ջիվլեզովի պատմագիտական և հասարակագիտական ժառանգությունը:

Հայկական հարցի ուսումնասիրության շրջանակներում 2008 թ. բաժնի գիտաշխատողներն ակտիվորեն մասնակցել են Պատմության ինստիտուտում անցկացված Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովին, որի գեկուցումները նույն խորագրով հրատարակվում են 2009 թ.:

2009 թ. հրատարակվում է բաժնի գլխավոր գիտաշխատող, ակադեմիկոս Հ. Միմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» աշխատության 3-րդ գիրքը, որում հանգամանորեն լուսաբանված են 1907 թ. հուլիս – 1908 թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունները: Նույն թվականին, կիլիկիահայության զանգվածային կոտորածների 100-ամյա տարելիցի հետ կապված, հրատարակվում են երկու աշխատություններ: Հ. Միմոնյանը ընթերցողների դատին է հանձնում «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)» մենագրությունը, որը նվիրված է 1909 թ. ապրիլին Կիլիկիայում տեղի ունեցած հայերի աննկարագրելի սպանողին: Հրատարակվում է նաև Վ. Պողոսյանի «1909 թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության գնահատմամբ» մենագրությունը, որը նվիրված է Հայոց ցեղասպանության պատմագրությունում չուսումնասիրված թեմայի՝ ֆրանսիական պատմագրության կողմից 1909 թ. կիլիկիահայության կոտորածների ուսումնասիրության քննական վերլուծությանը: Առաջին անգամ հեղինակը մանրամասնորեն վերլուծում է 1909–1918 թթ. Ֆրանսիայում լույս տեսած

սկզբնաղբյուրների հրատարակությունները և պատմագիտական ուսումնասիրությունները, արժևորում ֆրանսիացի հեղինակների ներդրումը 1909 թ. հայկական կոտորածների ուսումնասիրության ասպարեզում, բացահայտում և մեկնաբանում նրանց մոտեցումների սահմանափակությունները:

2009 թ. բաժնում քննարկվում և հրատարակման է երաշխավորվում «Հետազոտություններ Հայոց ցեղասպանության թեմայով» (Tanulmányok az örmény népirtás témaköréből) գիտական հոդվածների ժողովածուն (հրատարակվում է նույն թվականին Բուդապեշտում՝ հայերեն, անգլերեն և հունգարերեն), որում ընդգրկված են ինստիտուտի գիտաշխատողների արժեքավոր հոդվածները:

2010 թ. բաժնի վարիչի պաշտոնակատար է նշանակվում պ.գ.թ. Ռուբեն Գասպարյանը: Զբաղվելով Կիլիկյան Հայաստանի և կիլիկիահայության պատմության հիմնահարցերով (14-20-րդ դարի սկիզբ)՝ Ռ. Գասպարյանը հրատարակում է «Հայկական կոտորածները Կիլիկիայում (19-րդ դարի 90-ական թթ. – 1921 թ.)» արժեքավոր մենագրությունը: Հայ և օտար արխիվային վավերագրերի, աղբյուրների, պատմագիտական գրականության հիման վրա գրքում շարադրված է կիլիկիահայության ողբերգական պատմությունը, այն հայաջինջ քաղաքականությունը, որ իրականացնում էին թուրքական իշխանությունները: Առավել հանգամանակից ներկայացված են Կիլիկիայի 1909 թ. կոտորածները, 1915–1916 թթ. Մեծ Եղեռնը, 1918–1921 թթ. ողբերգական իրադարձությունները: Առանձնահատուկ ուշադրության են արժանացել կիլիկիահայության մղված ինքնապաշտպանական մարտերը:

2010 թ. Վ. Պողոսյանի ջանքերով լույս է տեսնում՝ 1920 թ. Մարաշում քեմալականների իրականացրած հայերի կոտորածները լուսաբանող փաստաթղթերի ժողովածու, որն ամփոփում է ֆրանսերեն և անգլերեն լեզուներով տպագիր ու անտիպ նյութեր, որոնք քաղված են հայկական արխիվներից, ժամանակի անգլիական և ֆրասիական մամուլից, օտարագրի և հայ ականատեսների հուշերից: Նույն թվականին լույս է տեսնում բաժնի գիտաշխատող, պ.գ.թ. Հ. Բոյաջյանի «Պողոս Նուբար Փաշան և բարենորոգումների խնդիրներն Արևմտյան Հայաստանում 1912–1914 թթ.» մենագրությունը, որում արխիվային նորահայտ փաստաթղթերի, պատմագիտական գրականության և պարբերական մամուլի նյութերի հիման վրա ուսումնասիրված և լուսաբանված է Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Հայկական հարցի լուծմանը նպաստելուն ուղղված եգիպտահայ հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար Փաշայի գործունեությունը: Ներկայացված են ականավոր գործիչ ջանքերն եվրոպական ղեկավար շրջանների և հասարակական կարծիքի վերաբերմունքն Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացմանն ի նպաստ դարձնելու ուղղությամբ:

2010 թ. բաժնի աշխատակիցներն ակտիվորեն մասնակցում և զեկուցումներով հանդես են գալիս Հայոց ցեղասպանության 95-ամյակին և Վ. Վիլսոնի իրավարար վճռի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովներին: Գիտաժողովների նյութերը բաժնի կողմից պատրաստվեցին հրատարակման և 2011 թ. Ս. Ստեփանյանի և Ա. Մարությանի խմբագրմամբ լույս տեսավ «Մեծ Եղեռն. դատապարտումից հատուցում» զեկուցումների ժողովածուն:

2011 թ. սեպտեմբերից բաժնի աշխատանքները ղեկավարեց պ.գ.թ., դոցենտ Ա. Մարությանը: Նույն տարում լույս է տեսնում Բ. Պողոսյանի «Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄՆ կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991–2007 թթ.» աշխատությունը, որում ներկայացված են Հայաստանի անկախության շրջանում ԱՄՆ կոնգրեսում Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևերի քննարկումները, հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեությունն այդ հարցում և դրա ազդեցությունը թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա:

2011 թ. Ա. Խոսրոնան մասնակցում է Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս-Այրեսում անցկացված Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի 9-րդ կոնֆերանսին, որտեղ հանդես է գալիս «Ասորիների ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (19-րդ դարի վերջ – 20-րդ դարի սկիզբ)» զեկուցմամբ: 2012 թ. Չիկագոյում համահեղինակությամբ անգլերենով լույս է տեսնում Ա. Խոսրոնայի «Assyrian Genocide During World War I» աշխատությունը, որում քննության է առնված ինչպես 1895–1896 թթ., այնպես էլ 1914–1918 թթ. թուրքական իշխանությունների կողմից ասորիների նկատմամբ իրականացված զանգվածային կոտորածների հետևողական քաղաքականությունը: 2017 թ. Չիկագոյում հրատարակվում է հեղինակի «A Brief History of the Assyrian Genocide in Words, Pictures and Monuments» աշխատությունը: 2012 թ. փետրվարին բաժնի վարիչ Ա. Մարուքյանը զեկույցով հանդես է եկել Իտալիայի Տրիեստ քաղաքում կայացած «Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ» խորագրով միջազգային գիտաժողովին:

Բաժնում մշտապես կարևորվել է բաժինը երիտասարդ կադրերով համալրելու, գիտական կադրերի պատրաստման հարցը: Բաժնում գիտական պրակտիկա են անցել ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոնի Պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի մագիստրանտները: Նրանց համար կազմակերպվել են տեսական և գործնական պարապմունքներ, մասնավորապես ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի R2P «Պաշտպանելու պարտավորություն» ծրագրի շրջանակներում, ուսանողների համար կազմակերպվեցին սիմուլացիոն պարապմունքներ, որոնց ընթացքում նրանք 20-րդ դարի վերջի և 21-րդ դարի սկզբի ցեղասպանության օրինակներով փորձում էին կիրառել «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման պատմաիրավական հիմքերը» դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները:

2013 թ. ընթացքում բաժնի գիտաշխատողներն իրենց մասնակցությունը բերեցին «Հայոց ցեղասպանություն. Մարտահրավերներ հարյուրամյակի նախաշեմին», ինչպես նաև «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» խորագրերով Երևանում կայացած խոշոր միջազգային գիտաժողովներին:

2013 թ. թվականին հրատարակվեց Ն. Մարուխանյանի «Հայ պատմագրությունը XIX դարում և XX դարասկզբին» արժեքավոր աշխատությունը: Զարգացնելով ուսումնասիրությունները՝ հեղինակը 2016 թ. հրատարակում է «Խորհրդահայ պատմագիտությունը 1920–1930-ական թվականներին», իսկ 2017 թ.՝ «Մինչխորհրդային և խորհրդային ժամանակաշրջանում Հայկական հարցի լուծման շուրջ Լեոյի պատմաքննական հայեցակետերը» արժեքավոր աշխատությունները:

2014 թ. լույս են տեսնում Ա. Մարուքյանի «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները» մենագրությունը և ՀՀ նախագահի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատական աստիճանի դիմելու հիմքերն ու հնարավորությունները» հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով գրքերը:

Բաժնի գիտաշխատողներն ակտիվ մասնակցություն ունեցան 2014 թ. հոկտեմբերին Երևանում կայացած «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը. Պատմություն և արդիական խնդիրներ» միջազգային գիտաժողովի կազմակերպման աշխատանքներին, հանդես եկան գիտական զեկուցումներով: 2015 թ. բաժնին իր ակտիվ մասնակցությունը բերեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին, բաժնի մի խումբ աշխատակիցներ զեկուցումներով հանդես եկան Մոսկվայում, Ստավրոպոլում, Դնեպրոպետրովսկում, Թեհրանում, Սպահանում և մի շարք այլ քաղաքներում տարելիցին նվիրված միջազգային գիտաժողովներին: ՀՀ Սփյուռքի նախարարության հրատա-

րակչական ծրագրերի շրջանակներում հրատարակվեց Ա. Մարությանի «Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը» գիրքը: ՀՀ նախագահի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում լույս տեսան նաև հեղինակի «Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում» հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով գրքերը:

2016 թ. բաժնի գիտաշխատողները մասնակցեցին «Շնորհում ցեղասպանության» երկրորդ Գլոբալ ֆորումի աշխատանքներին, զեկուցումներով հանդես եկան Երևանում կայացած «Հայոց ցեղասպանությունը և հատուցման խնդիրը», ինչպես նաև Մոսկվայում՝ «Армянская диаспора и армяно-российские отношения: история и современность» միջազգային գիտաժողովներին:

ՀՀ Մփյուռքի նախարարության հետ համագործակցությամբ 2016 թ. հրատարակվեց Ա. Մարությանի «Հայոց ցեղասպանությունը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում» աշխատությունը: 2017 թ. լույս տեսավ բաժնի գիտաշխատող, պ.գ.թ. Ա. Բաբլումյանի «Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի հայ բնակչությունը XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)» մենագրությունը: Նույն թվականին ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի Հայ պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի կողմից հրատարակած «Հայոց ցեղասպանությունը քարտեզներով» անգլերեն լեզվով ատլասի ակնարկային տեքստերը հեղինակվեցին Ա. Մարությանի կողմից:

Բաժնի գիտաշխատողների ջանքերով հրատարակման նախապատրաստվեցին «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը. Պատմություն և արդիական խնդիրներ» և «Հայոց ցեղասպանությունը և հատուցման հիմնախնդիրը» միջազգային գիտաժողովների զեկուցումների ժողովածուները: Ինչպես բաժնի, այնպես էլ ԳԱԱ պատմության ինստիտուտի մյուս աշխատակիցները ապագայում էլ ջանքեր չեն խնայելու նպաստելու Հայոց ցեղասպանության պատմության հետազոտությանը և հայ ժողովրդի արդարացի պահանջատիրության խնդիրների բարձրաձայնմանն ու լուծմանը:

Բաժնի գիտական աշխատանքներն իրականացնում են. բաժնի վարիչ՝ առաջատար գիտաշխատող, պ.գ.դ., դոցենտ Ա. Մարության, առաջատար գիտաշխատող՝ պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Թունյան, ավագ գիտաշխատողներ՝ պ.գ.թ. Լ. Հովհաննիսյան, պ.գ.թ. Ա. Խոսրոնա, պ.գ.թ. Ա. Բաբլումյան, գիտաշխատող՝ պ.գ.թ. Կ. Հայրապետյան, ավագ լաբորանտ՝ Մ. Կոնինյան: